Արձանագրություն N 2
«Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԲՆԱ-21/50» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովը նիստը շարունակեց 18.10.2021թ, ժամը 10:00-ին, ք. Երևան, Աճառյան 2, 212 սենյակ հասցեում

Գնահատող հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝
- Ռ. Սիմոնյան

Հանձնաժողովի բացող անդամներ՝
- Հ. Մանուկյան
- Գ. Առաքելյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝
- Ն. Ստեփանյան
- Ա. Իսաջանյան

Քարտուղար՝ Էլինա Պողոսյան

Օրակարգ

1. «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԲՆԱ-21/50» ծածկագրով ընթացակարգին էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ներկայացված հայտերը:
2. Ցուրաքանչյուր մասնակցի առաջարկած գին:
3. «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԲՆԱ-21/50» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին:
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

1. «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԲՆԱ-21/50» ծածկագրով ընթացակարգին էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ներկայացված հայտերը

(Է.Պողոսյան)

1.1 «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ –ի կարիքների համար «բժշկականնշանակության ապրանքների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԲՆԱ-21/50» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանումը
1.	ՁԻ-ԷՆ-ՁԻ ՍՊԸ
2.	ՍԱՎ ԳՐՈՒՊ ՍՊԸ
3.	Անիկո ֆարմ ՍՊԸ
4.	ՊՐՈ-ՄԵԴ ՊԼՈՒՍ ՍՊԸ
5.	Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ
6.	Դեզսերվիս ՍՊԸ
7.	ՄՀԵՐ ԳԱՍԻԱ ՍՊԸ
8.	Սմարթ-Ձոբ ՍՊԸ
9.	Նատալի ֆարմ
10.	ԷՖԲԻԷՅ ՍՊԸ
11.	ԼԵՅԿՈ ՍՊԸ

12.	ՎԱԼԼԻ ԳՐՈՒՊ ՍՊԸ
13.	Խաչպար ՍՊԸ
14.	ՄԵԴ ՖԱՐՄ ՍՊԸ
15.	ԹԱԳՀԵՄ ՍՊԸ

1.2 «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ , «ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ ԴԵՂԱՏՈՒՆ» ՍՊԸ , «Մեդտեխսերվիս» ՍՊԸ -ի հայտը պարունակող ծրարներում փաստաթղթեր կցված չեն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

1. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գին

(Է.Պողոսյան)

2:1 «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները. Տե՛ս Հավելված N 1/կցվում է ֆայլով/

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԲՆԱ-21/50» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին:

(Է.Պողոսյան)

3.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի.

3.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

3.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԲՆԱ-21/50» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, *բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի.*

- «ԷՖԲԻԷՅ» ՍՊԸ -ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ հավելված 1.1-ում արտադրողի անվանումը սունյակում լրացված է երկրների մասին տեղեկություն, մինչդեռ սույն ընթացակարգի հրավերով երկրների մասին տեղեկություն չի պահանջվել, ուստի անհրաժեշտ է արտադրողի անվանումը սունյակում լրացնել հրավերով պահանջվող տեղեկատվությունը, ինչպես նաև հայտը պարունակող ծրարում բացակայում է Հավելված 1.3 ՝Իրական շահառուների մասին տեղեկատվությունը:
- «ՄԵԴ ՖԱՐՄ» ՍՊԸ -ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ հավելված 1.1-ում արտադրողի անվանումը սունյակը լրացված չէ , ուստի անհրաժեշտ է արտադրողի անվանումը սունյակում լրացնել հրավերով պահանջվող տեղեկատվությունը, ինչպես նաև հայտը պարունակող ծրարում բացակայում է Հավելված 1.3 ՝Իրական շահառուների մասին տեղեկատվությունը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել «ԷՖԲԻԷՅ» ՍՊԸ -ին և «ՄԵԴ ՖԱՐՄ» ՍՊԸ -ին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները, իսկ իսկ շտկված տարբերակն ուղարկել ihak.gnumner@gmail.com էլեկտրոնային հասցեին:

Հանձնաժողովի քարտուղարը նույն օրը էկեկտրոնային եղանակով ««ԷՖԲԻԷՅ» ՍՊԸ -ին և «ՄԵԴ ՖԱՐՄ» ՍՊԸ ուղարկեց արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին ծանուցումները և վերոհիշյալ մասնկիցները մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային հասցեին են ուղարկել համապատասխան շտկումները :

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

(Է.Պողոսյան)

4.1 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության ուսումնասիրությունը վերջացնելու օրվան հաջորդ աշխատանքային օրվա ժամը 11:00-ին, «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի շենքում, ք. Երևան, Աճառյան 2 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝	_____	Ռ. Սիմոնյան
հանձնաժողովի անդամներ՝	_____	Ն. Ստեփանյան
	_____	Ա. Իսասաջանյան
	_____	Հ. Մանուկյան
	_____	Գ. Առաքելյան
հանձնաժողովի քարտուղար՝	_____	Է. Պողոսյան